ԹՈՒՐՔԻԱՅԻ ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Խորհրդային Միության փլուզումից անմիջապես հետո Թուրքիան ակտիվացրեց իր արտաքին քաղաքականության հարավկովկասյան ուղղությունը՝ փորձելով լրացնել տարածաշրջանում առաջացած ուժային վակուումը: Թուրքիան այդ ժամանակաշրջանում կարողացավ շատ արագ կողմնորոշվել՝ գիտակցելով Կասպյան ավազանի էներգառեսուրսների կարևորությունը և դրանց տարանցումից ստացվելիք հնարավոր օգուտները: Աստիճանաբար դա վերածվեց հստակ մշակված արտաքին քաղաքական առաջնահերթության և հայեցակարգի: Պետք է նշել, որ Վրաստանում Թուրքիայի փափուկ ուժի քաղաքականությունը տարածաշրջանում սեփական դիրքերն ամրապնդելու ավելի հեռահար քաղաքականության բաղադրիչներից մեկն է: Խնդիրը կրկնակի արդիական է Հայաստանի համար, քանի որ, մի կողմից, ուղղակիորեն բախվում է ՀՀ-ն տարածաշրջանային նախագծերից մեկուսացնելու թուրք-ադրբեջանական տանդեմի քաղաքականությանը, մյուս կողմից՝ վտանգներ են առաջանում Վրաստանում հայ համայնքի բնականոն կենսագործունեության համար:

Վրաստանի և հարևան մյուս երկրների հանդեպ առավել համապարփակ, այդ թվում՝ փափուկ ուժի քաղաքականություն մշակելու և իրականացնելու մեկնարկը տրվեց 2002 թ.՝ Թուրքիայում «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ) իշխանության գալուց հետո: Փափուկ ուժ կիրառելու մարտավարությանը տեսական ձևակերպում տրվեց ԱԶԿ ներկայացուցիչ, 2009-2014 թթ. Թուրքիայի արտգործնախարար և 2014-2016 թթ. վարչապետ Ահմեդ Դավութօղլուի կողմից՝ «Ռազմավարական խորության» հայեցակարգում, որի հիմքում դրվեց «զրո խնդիր հարևանների հետ» սկզբունքը[1]: Ա. Դավութօղլուն փափուկ ուժի կիրառումը համարում էր տարածաշրջանում սեփական շահերը ոչ ուժային ճանապարհով առաջ մղելու գործիք: Այդ նպատակին հասնելու համար նա նախապատվություն էր տալիս հարևանների հետ քաղաքական ակտիվ երկխոսությանը, տնտեսական համագործակ-

[1] Տե՛ս **Yeşiltaş M.,** The transformation of the geopolitical vision in Turkish foreign policy. Turkish Studies, 2013, vol. 14, № 4, էջ 670 // https://www.tandfonline.com/doi/abs/10.1080/14683849.2013.862927

ցությանը և նախաձեռնողական մշակութային քաղաքականությանը[2]:

ԱԶԿ-ի իշխանության գալը մոտավորապես համընկավ Վրաստանում «Վարդերի հեղափոխության» և Միխեիլ Սաակաշվիլու իշխանության գալու հետ: Վերջինս որդեգրեց Թուրքիայի հետ մերձեցման քաղաքական կուրս, որը բարենպաստ պայմաններ ստեղծեց Թուրքիայի ազդեցության մեծացման համար: Պատահական չէ, որ Վրաստանի նախագահը թուրք-վրացական երկկողմ հարաբերությունների այդ ժամանակահատվածն անվանել է «ոսկե դար»[3]:

Ներկա փուլում Թուրքիայի փափուկ ուժի քաղաքականությունը Վրաստանում հիմնականում ունի մի քանի ուղղություն: Կարծում ենք՝ դրանցից հիմնականը տնտեսական ծրագրերն են Վրաստանի տնտեսության մի շարք առանցքային ոլորտներում: Հատկապես 2000-ական թվականների կեսերից՝ ռուս-վրացական հարաբերությունների վատթարացումից հետո, Թուրքիան առաջատար դիրք զբաղեցրեց Վրաստանի տնտեսական գործընկերների շարքում՝ զբաղեցնելով առաջին տեղն առևտրի ծավալների չափով[4]: Եթե 1995-2003 թթ. երկկողմ առևտրի ծավալները չէին գերազանցում $200 մլն-ը, ապա 2004-2007 թթ. այդ թիվը կրկնապատկվեց[5]: 2007 թ. նոյեմբերի 21-ին երկու երկրների միջև ստորագրվել է ազատ առևտրի մասին համաձայնագիր, ինչպես նաև վերացվել է կրկնակի հարկման սկզբունքը, ինչը կարևոր ցուցիչ է երկկողմ հարաբերությունների մակարդակի գնահատման առումով: Իսկ վերջին տարիներին Թուրքիա-Վրաստան առևտրաշրջանառությունն ունեցել է հետևյալ տեսքը՝ 2015 թ.՝ $ 1.5 մլրդ, 2016 թ.՝ $ 1.526 մլրդ, 2017 թ.՝ $ 1.591 մլրդ[6]: Ինչպես երևում է, առևտրաշրջանառության տարեկան ծավալները կայուն են, ինչը տպավորիչ ցուցանիշ է:

Թուրքական տնտեսական ներդրումները զգալի են վրացական շուկայում, ինչը ևս փափուկ ուժի արդյունավետության վկայությունն է: Համեմատության համար կարելի է նշել, որ եթե 1997-2003 թթ. Վրաստանում Թուրքիայի ներդրումների ընդհանուր ծավալն ընդամենը $103 մլն էր, ապա 2003-2012 թթ. այդ թիվը հասել է $ 864 մլն-ի[7]: Վրաստանում տնտեսական տարատեսակ խոշոր ծրագրերի մեջ (ջէկեր, ճանա-

---

[2] Տե՛ս **Сафонкина Е. А.** Турция как новый актор политики мягкой силы // "Вестник международных организаций", vol. 9, 2014, էջ 148 // https://cyberleninka.ru/article/v/ turtsiya-kak-novyy-aktor-politiki-myagkoy-sily

[3] Տե՛ս «Interview with Mikheil Saakashvili: Georgia's Westward March» // Turkish Policy Quarterly, v. 12, № 1, 2013, էջ 21 // http://turkishpolicy.com/article/605/interview-with-mikheil-saakashvili-georgias-westward-march-spring-2013

[4] Վերջին տարիներին այդ դիրքում Թուրքիային երբեմն փոխարինում է Ադրբեջանը:

[5] Տե՛ս **Ter-Matevosyan V.**, Cooperation paradigms in the South Caucasus: Making sense of Turkish-Georgian relations, Varia, № 4, 2014 // https://eac.revues.org/689#tocto1n3

[6] Տե՛ս «Trade statistics for international business development, Monthly, quarterly and yearly trade data», https://www.trademap.org/Bilateral_TS.aspx?nvpm=1|792||268||TOTAL|||2|1|1|2|2|1|1|1|1

[7] Տե՛ս **Վ. Տեր-Մաթևոսյան**, Թուրքիայի քաղաքական և սոցիալ-տնտեսական գործունեության հետևանքները Վրաստանում // «21-րդ ԴԱՐ», թիվ 1 (65), 2016, էջ 41, http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/XXI%20Dar/01_2016.pdf

պարհներ և երկաթուղիներ) ներգրավված են 1 մլրդ դոլար և ավելի կապիտալով թուրքական ընկերություններ[8], որոնց շարքում է, օրինակ, թուրքական «TAV group»-ը (Tepe-Akfen-Vie), որն ակտիվորեն մասնակցել է Թբիլիսիի և Բաթումի օդանավակայաններում նոր մասնաշենքերի կառուցմանը՝ ներդնելով $100 մլն[9]: Այս ընկերության ներգրավվածությունը վրացական շուկայում մեծապես խթանեց թուրքական ավիաընկերությունների դիրքերի ամրապնդումը վրացական շուկայում: Վրաստանում մասնաճյուղեր ունեն նաև թուրքական «T.C. Ziraat Bankası» և «Türkiye İş Bankası» բանկերը:

Հատկանշական է նաև Թուրքիայի և Վրաստանի միջև 2006 թ.-ից ուժի մեջ մտած առանց մուտքի արտոնագրի ռեժիմը, որը զգալիորեն հեշտացրել է այդ երկրների քաղաքացիների փոխայցելությունները:

Վրաստանում Թուրքիայի փափուկ ուժի քաղաքականության մեջ բավականին ծանրակշիռ դեր ունեն փափուկ ուժի մշակութային մեխանիզմները՝ լեզվական, կրոնական, կրթական և այլ ենթաոլորտներով: Նրանց թիրախն է ինչպես տեղի բազմաքանակ թուրք/մահմեդական բնակչությունը, այնպես էլ վրացիներն ու այլ ազգությունների ներկայացուցիչները, մասնավորապես հայ համայնքը:

Ընդհանուր առմամբ այդ ոլորտներում Թուրքիայի քաղաքականությունը հիմնականում հենվում է վարչապետի հովանու ներքո գործող հետևյալ կառույցների վրա՝ «Համագործակցության և համակարգման թուրքական գործակալություն» (ՀՀԹԳ-TİKA), Յունուս Էմրեի անվան թուրքական մշակութային կենտրոններ, ինչպես նաև Կրոնական գործերով նախագահություն (Diyanet, Դիյանեթ): Դրանք տարբեր ձևաչափերով ներկայացված են Վրաստանում:

Այսպես, այդ կառույցներից առաջինը՝ ՀՀԹԳ-ն, Վրաստանում ակտիվ գործունեություն է ծավալում 1994 թ.-ից: Ըստ գործակալության պաշտոնական կայքի տեղեկատվության՝ ՀՀԹԳ-ի հիմնական գործառույթը աշխարհի տարբեր երկրներում գտնվող թուրքական համայնքներին բազմաբնույթ օժանդակություն ցուցաբերելն է[10]: Վրաստանում վերջին տարիներին այդ կառույցի իրականացրած ծրագրերից կարելի է առանձնացնել սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների և ծառայությունների կատարելագործման, կրթական կենտրոնների վերանորոգման, առողջապահական ոլորտի բարելավման ուղղությամբ ներդրումները: Վրաստանում այդ կազմակերպության լայնածավալ գործողություններից է 2000 թ. «Թուրքաբանություն» ծրագրի ներմուծումը, որի շնորհիվ երկրի տարբեր բուհերում ստեղծվեցին թուրքագիտութ-

---

[8] Տե՛ս **Chkhikvadze I.**, Zero Problems with Neighbors: The Case of Georgia // Turkish Policy Quarterly, 2011, http://turkishpolicy.com/Files/ArticlePDF/zero-problems-with-neighbors-the-case-of-georgia-summer-2011-en.pdf

[9] Տե՛ս «New Airport Terminal Opened in Tbilisi», https://old.civil.ge/eng/article.php?id=14587

[10] Տե՛ս «TIKA»-ի պաշտոնական կայքէջ, http://www.tika.gov.tr/en

յան հետազոտական կենտրոններ[11]: Իհարկե, այդ կառույցի հիմնական թիրախը թուրքերով/մահմեդականներով բնակեցված շրջաններն են:

ՀՀԹԳ-ից զատ՝ Վրաստանում Թուրքիայի իմիջի և գրավչության բարձրացմամբ զբաղվող մյուս կառույցը Յունուս Էմրեի անվան թուրքական մշակութային կենտրոններն են, որոնք ներդրվեցին 2007 թ.: Դրանց նպատակը Թուրքիայի պատմության, լեզվի, գրականության և արվեստի տարածումն է, միաժամանակ նաև՝ «Գյուլենի դպրոցներին» հակակշռելը[12]: Այդ կենտրոնները բրիտանական «British Council»-ի, ֆրանսիական «Alliance Française»-ի յուրատեսակ նմանակն են: Այդպիսի կենտրոններ են գործում Թբիլիսիի պետական համալսարանում, Քութայիսի Ակակի Ծերեթելիի անվան և Ախալցխայի պետական կրթական համալսարաններում: Հատկապես ուշագրավ է նման կենտրոնի բացումը Ախալցխայում, որտեղ առկա է մեծաթիվ հայ համայնք: Թեև պաշտոնապես այդ մասին, բնականաբար, ոչինչ չի հայտարարվել, սակայն պարզ է, որ նման կենտրոն ունենալու նպատակներից մեկը տեղի հայ համայնքի ազդեցությունը սահմանափակելն ու հակակշռելն է:

Ի տարբերություն վերոնշյալ երկու կառույցների, որոնց հիմնական գործառույթը համագործակցությունն է մշակութային և կրթական ոլորտներում, Վրաստանում գործող թուրքական երրորդ խոշոր կառույցը՝ Դիյանեթը, հիմնականում կենտրոնացած է կրոնական և մասամբ կրթական խնդիրների վրա: Այն հիմնադրվել է դեռևս 1924 թ., իսկ 1980 թ.-ից դուրս է եկել նաև միջազգային ասպարեզ: Վրաստանում կառույցը զբաղվում է տեղի մահմեդական բնակչությանը տարատեսակ հոգևոր ծառայություններ մատուցելով և նյութական օժանդակությամբ: Այն նաև համակարգում է Վրաստանում գործող կամ կառուցվող մզկիթների ֆինանսավորման հարցերը, խթանում աստվածաբանական և կրոնագիտական ուսումնասիրությունները[13]: Մահմեդականները կազմում են Վրաստանի ընդհանուր բնակչության 10-11 %-ը և կենտրոնացած են Քվեմո Քարթլիի, Կախեթի ու հատկապես Աջարիայի շրջաններում[14]: Վերջինում, ըստ որոշ տվյալների, մահմեդական է բնակչության 30 %-ը[15]: Դիյանեթը սերտորեն համագործակցում է Աջարիայի մուսուլմաններին ներկայացնող մուֆթիյաթի հետ:

Բացի Թուրքիայի վարչապետի հովանու ներքո գործող վերոնշյալ մարմիններից, Վրաստանում գործունեություն են ծավալում թուրքա-

---

[11] Տե՛ս **Алексанян Л. М.** Политика «мягкой силы» Турции в отношении Грузии // "Вестник МГИМО", 2 (47), 2016, http://www.vestnik.mgimo.ru/razdely/mirovaya-politika/politika-myagkoy-sily-turcii-v-otnoshenii-gruzii

[12] Տե՛ս **Сафонкина Е. А.,** նշվ. հոդվածը:

[13] Տե՛ս **Korkut, Ş.**, The Diyanet of Turkey and Its Activities in Eurasia after the Cold War, Acta Slavica Iaponica, 28, էջ 117-139, 2010 // https://eprints.lib.hokudai.ac.jp/dspace/bitstream/2115/ 47624/1/ASI28_006.pdf

[14] Տե՛ս «CIA The World Factbook», https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/geos/gg.html

[15] Տե՛ս «2014 Georgia General Population Census», http://census.ge/en/home

կան ոչ պետական մի շարք կառույցներ, որոնց նպատակները միշտ չէ, որ համընկնում են պաշտոնական Անկարայի քաղաքականությանը: Դրանցից պետք է առանձնացնել Ֆեթուլլահ Գյուլենի հետևորդներին, որոնք ինքնակազմակերպվել են «Caglar Educational Institutions» անվամբ կառույցներում՝ սկսած 1993 թ.-ից: Հարկ է նշել, որ մինչև 2013-2014 թթ. Ռ. Էրդողանի հետ Ֆ. Գյուլենի տարաձայնությունները այդ կազմակերպությունների քաղաքականությունը հիմնականում տեղավորվում էր պաշտոնական Անկարայի փափուկ ուժի քաղաքականության համատեքստում: Բ. Բալչիի կարծիքով, Էրդողանի հետ հակասությունից հետո դրանք հաճախ ոչ միայն չեն համընկնում, այլև տրամագծորեն հակդրվում են[16]:

Միևնույն ժամանակ չի կարելի աչքաթող անել այն հանգամանքը, որ Թուրքիայի փափուկ ուժի քաղաքականությունը Վրաստանի ոչ բոլոր շրջանակներում է անվերապահորեն ընդունելի. հատկապես հոգևոր գործիչների շրջանում ակնհայտ բացասական վերաբերմունք կա Վրաստանում Թուրքիայի գրավչության բարձրացման և հատկապես կրոնամշակութային հարցերում ազդեցության ընդլայնման նկատմամբ: Քաղաքական կուսակցությունների շրջանում ևս կան նմանատիպ կողմնորոշմամբ ուժեր. բացի «Վրացական երազանք» իշխող դաշինքից՝ նման տրամադրություններ են դրսևորում «Ազատ Վրաստան» կուսակցությունը և «Վրաստանի հայրենասերների դաշինքը», որոնք թեև ներկայացված չեն խորհրդարանում, սակայն մշտապես բարձրաձայնում են Վրաստանում Թուրքիայի նման ակտիվ ներգրավվածության վտանգների մասին[17]:

Թուրքիայի փափուկ ուժի և հատկապես դրա բաղկացուցիչ կրոնամշակութային քաղաքականության հանդեպ ակնհայտ բացասական վերաբերմունք ունի Վրաց ուղղափառ եկեղեցին, որի դիրքորոշումն ավանդականորեն ուղենիշային է եղել վրաց ժողովրդի մի ստվար հատվածի համար: Այսպես, Վրաց ուղղափառ եկեղեցու մտահոգության հիմնական առարկան մզկիթների և այլ հուշարձանների կառուցումն է, կրոնական քարոզչության աճը: Խնդիրը հատկապես արդիական է Աջարիայում, որտեղ կենտրոնացած է թուրք/մահմեդական բնակչության ստվար հատվածը: Որոշ տվյալներով, Աջարիային է բաժին ընկնում Վրաստանում գործող 300-ից ավելի մզկիթների գրեթե կեսը, որոնց գերակշիռ մասը կառուցվել է վերջին տարիներին[18]:

Կարծում ենք, որ Վրաստանում Թուրքիայի փափուկ ուժի քաղաքականության էությունն ու դինամիկան ընկալելու համար պետք է դրանք դիտարկել Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան հարաբերություն-

---

[16] Տե՛ս **Balci B.**, The Gülen Movement and Turkish Soft Power, Carnegie Endowment for International Peace, 04.02.2014 // https://carnegieendowment.org/2014/02/04/g-len-movement-and-turkish-soft-power-pub-54430

[17] Տե՛ս **Ter-Matevosyan V.**, նշվ. աշխ.:

[18] Տե՛ս **Վ. Տեր-Մաթևոսյան**, նշվ. աշխ., էջ 51:

ների համատեքստում: Թուրքիան մշտապես գիտակցել է Վրաստանի կենսական նշանակությունը՝ որպես ոչ միայն թուրք-ադրբեջանական տանդեմի, այլև Կենտրոնական Ասիայի թուրքալեզու երկրների միջև գտնվող օազիս: Կասպյան ավազանի էներգետիկ ռեսուրսների արդյունահանման ծավալների ավելացմանը զուգահեռ՝ Վրաստանն սկսեց առանցքային դեր ունենալ Թուրքիայի՝ տարածաշրջանային էներգետիկ հանգույց դառնալու նկրտումներում[19]:

Պետք է նաև նշել, որ Վրաստանը լրջորեն շահագրգռված է թուրք-ադրբեջանական տանդեմի հետ համագործակցելու հարցում՝ գիտակցելով իր օգուտները որպես տարանցիկ երկիր: Չպետք է մոռանալ նաև Ռուսաստանի հետ լուրջ տարաձայնություններն ու հարաբերությունների բացակայությունը: Վրաստանի ակտիվ ներգրավվածությունը թուրք-վրաց-ադրբեջանական տարատեսակ եռակողմ նախագծերում դրա վառ վկայությունն է: Հիշենք, օրինակ, Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը, Բաքու-Թբիլիսի--Կարս երկաթուղին և այլ՝ ավելի փոքր հաղորդակցային ուղիները (օրինակ՝ 2016 թ. փետրվարից գործող էլեկտրաէներգիայի տարանցումը Ադրբեջանից Թուրքիա): Ասվածը հավաստում են նաև երեք երկրների ղեկավարների[20], արտաքին և պաշտպանական գերատեսչությունների ղեկավարների մակարդակով պարբերաբար տեղի ունեցող հանդիպումները, 2012 թ.-ից սկսած՝ համատեղ իրականացվող «Անվերջություն» զորավարժությունները և այլն:

Թուրքիան հստակորեն գիտակցում է, որ Վրաստանում իր գերակա դիրքը պահելը երկարաժամկետ հեռանկարում խնդրահարույց կլինի, եթե առաջնորդվի բացառապես թուրք-ադրբեջանական տանդեմի շահերով: Այս իմաստով փափուկ ուժի քաղաքականությունը և կիրառվող մեխանիզմները նպատակ ունեն ստեղծելու առավել բարենպաստ մթնոլորտ երկկողմ փոխհարաբերությունների զարգացման և ամրապնդման համար, «սոսնձելու» տնտեսական շահերով պայմանավորված համագործակցությունը:

Մյուս կողմից՝ այդ քաղաքականությունը որոշակի վտանգներ է պարունակում նաև ՀՀ-ի համար: Կարելի է ասել, որ Վրաստանում Թուրքիայի փափուկ ուժի քաղաքականությունը «կոշտ» հետևանքներ է ունենում Հայաստանի համար: Այն լիովին տեղավորվում է տարածաշրջանային տնտեսական նախագծերից, տարատեսակ հաղորդակցային ուղիներից ՀՀ-ին մեկուսացնելու, շրջափակման մեջ պահելու թուրք-ադրբեջանական ռազմավարության տրամաբանության մեջ: Չի կարելի հաշվի չառնել հնարավոր վտանգները նաև Վրաստանում մե-

---

[19] Տե՛ս **Tagliapietra S.**, Turkey as a Regional Natural Gas Hub: Myth Or Reality?, Turkish Policy Quarterly, vol. 12, № 4, 2014 // http://turkishpolicy.com/dosyalar/files/vol_12-no_4-tagliapietra.pdf

[20] Այդ ձևաչափով վերջին հանդիպումը տեղի է ունեցել 2018 թ. հունիսի 12-ին Թուրքիայում՝ TANAP գազամուղի բացման կապակցությամբ:

ծաթիվ հայ համայնքի համար: 2014 թ. մարդահամարի պաշտոնական տվյալներով Վրաստանում մահմեդականների ընդհանուր թիվը 399.000 է, ադրբեջանական համայնքինը՝ 233.000, հայ համայնքի թիվը՝ 168.000[21]: Վրաստանում թուրք-ադրբեջանական տանդեմի ազդեցությունը պետք է մղի Հայաստանին գործնական քայլեր ձեռնարկելու: Այստեղ առանցքային դեր ունի Վրաստանում ՀՀ դեսպանությունը: Իշխանության մյուս օղակները նույնպես ամեն ջանք պետք է գործադրեն Վրաստանի իշխանությունների առջև այդ խնդիրները բարձրացնելու և լուծում տալու համար:

Բանալի բառեր – *փափուկ ուժ, «Արդարություն և զարգացում», առևտրաշրջանառության ծավալ, տնտեսական ներդրումներ, մշակույթ, կրոն, լեզու, կրթություն*

АЙК САРГСЯН – *Основные направления турецкой политики мягкой силы в отношении Грузии.* – Получив теоретическое оформление в западной политологии, концепция «мягкой силы» заняла важное место во внешнеполитическом инструментарии различных стран. Не составляет исключения и Турция. После прихода к власти в 2002 г. партии «Справедливость и развитие», продвигая свои интересы, турки активно используют механизмы этой политики. В статье анализируются особенности турецкой «мягкой силы» в Грузии, её основные компоненты и роль в контексте двусторонних отношений.

Ключевые слова: *мягкая сила, «Справедливость и развитие», объём торговли, инвестиции, культура, религия, язык, образование*

HAYK SARGSYAN – *Key Vectors of Turkish Soft Power Policy in Georgia: Regional Dimension.* – The region of South Caucasus has historically been an arena of competing interests for global and regional actors. Turkey, which has always been one of them, actively reen-gaged into the region after the collapse of the Soviet Union. Not only did Turkey realize Georgia's crucial importance as a transit country of the Caspian energy resources, but it also viewed Georgia as a link with Azerbaijan and Central Asian republics. Therefore, immediately after the collapse of the Soviet Union Turkey set up intensive cooperation with Georgia also making use of soft power tools. The aim of this article is to explore the peculiarities of Turkish soft power in Georgia, to examine its main components and to outline the importance of soft power for bilateral relations.

Key words: *soft power, «Justice and Development», bilateral trade, financial investments, culture, religion, language, education*

Ներկայացվել է՝ 25.02.2019, գրախոսվել է՝ 12.03.2019, ընդունվել է տպագրության՝ 26.04.2019

[21] Տե՛ս «Georgia General Population Census Main Results», 2014, http://census.ge/files/results/Census_release_ENG.pdf